ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/114

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-
Բողոք բերող՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Մ. Եսայանի, Խ. Սիսակյանի,
«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդ. Սաղաթելյանի, ներկայացուցիչ՝ Մ. Նիգարյանի
«Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Խաչատուրյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, տեսամոնիտորների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 15.12.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առ 08.12.2021թ. N 2 Արձանագրության՝ 1-ին չափաբաժնով «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին կայացրած որոշումը ճանաչել անվավեր (չեղյալ) և «Փրիթի ուեյ» ՍՊԸ հայտը՝ մերժել:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 10.12.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 14.12.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/20576-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 15.12.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

Բողոքներ քննող անձի կողմից 16.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/114 համարի ծածկագիրը:

22.12.2021թ.-ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

22.12.2021թ.-ին և 14.01.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 22.12.2021թ.-ին և որոշման հրապարակման օր է նշանակվել 14.01.2022թ.-ին:

2. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն 15.12.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույնով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն (ՀՀ, ք.Երևան 0025, Խանջյան փող., շ. 50, «Թեքեյան բիզնես կենտրոն», Հեռ. +374 10 52-13-56, E-mail: info@alpha.am) պաշտոնապես ներկայացնում է բողոք՝ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման անցկացման ընթացքում գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և ՀՀ գնումների մասին գործող օրենսդրության կոպիտ խախտումների դեմ:

Ս.թ. դեկտեմբերի 01-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ARMEPS համակարգի միջոցով՝ info@armeps.am էլեկտրոնային փոստից ստացել է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կողմից «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով էլեկտրոնային ձևով անցկացվող գնանշման հարցման հրավերն և մասնակցել է նշված գործընթացին, որի 1-ին (միակ) չափաբաժնով նախատեսվում էր Պատվիրատուի կարիքների համար ձեռքբերել տեսամոնիտորներ (Հրավերի պայմանագրի Հավելված №1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» պատճենը՝ 2 (երկու) թերթ կցված է սույն բողոքին):

Համաձայն 16.12.2016 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի ս.թ. դեկտեմբերի 02-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ARMEPS համակարգի միջոցով դիմել է «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, խնդրելով տալ պարզաբանումներ որոշ առաջացած հարցերի վերաբերյալ և նույն օրը գնահատող հանձնաժողովը կրկին ARMEPS համակարգի միջոցով հրապարակել է պաշտոնական պարզաբանում (Պարզաբանման պատճենը՝ 1 (մեկ) թերթ կցված է սույն բողոքին):

Հայտերը բացվել են ս.թ. դեկտեմբերի 08-ին ժամը 10.00-ին և նույն օրը՝ ընդամենը 3 ժամ անց՝ 13.12-ին ARMEPS համակարգի միջոցով՝ info@armeps.am էլեկտրոնային փոստից «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ստացել է «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնման ընթացակարգի առ 08.12.2021թ. N 2 Արձանագրությունն և «Փրիթի ուեյ» ՍՊԸ-ի հետ Պայմանագիր կնքելու մասին գնահատող հանձնաժողովի առ 08.12.2021թ. որոշումը (N2 Արձանագրության պատճենը՝ 1 (մեկ) թերթ և Պայմանագիր կնքելու մասին որոշման պատճենը՝ 1 (մեկ) թերթ կցված են սույն բողոքին):

Ուսումնասիրելով www.armeps.am կայքում հասանելի մասնակիցների հայտերը, մասնավորապես

Հավելվածներ № 1.1 «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն եզրակացության եկավ, որ «Փրիթի ուեյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկը (Հավելված № 1.1 պատճենը՝ 1 (մեկ) թերթ կցված է սույն բողոքին) չի համապատասխանում հրավերի մինիմալ տեխնիկական պահանջներին, քանզի՝

1. ARMEPS համակարգում հրապարակված Պատվիրատուի առ 02.12.2021թ. պաշտոնական պարզաբանումում սեվով սպիտակի վրա արձանագրված է, որ «IPS» հապավման բացվածքն է՝ «Intelligent Pixel Shift», ինչը հանդիսանում է հրավերով պահանջված դիսպլեյի հատուկ բնութագիր նախագծված մնացորդային պատկերների վերացման համար:

Մինչդեռ «Փրիթի ուեյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N1.1) առաջարկված Samsung VM55T-E մակնիշի դիսպլեյի (https://displaysolutions.samsung.com/digital-signage/detail/1764/VM55T-E - արտապումը արտադրողի կայքից՝ ընդամենը 13 (տասներեք) թերթ կցված է սույն բողոքին) պարագայում «IPS» հապավումը համաձայն Samsung ընկերության պաշտոնական WEB կայքի (https://pid.samsungdisplay.com/en/learning-center/white-papers/va-vs-ips - արտապումը արտադրողի կայքից ՝ ընդամենը 5 (հինգ) թերթ կցված է սույն բողոքին) նշանակում է «In-Plane Switching», ինչը հանդիսանում է հեղուկ-բյուրեղային (LCD) մատրիցաների արտադրման տեխնոլոգիա:

Նշենք, որ ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանն առ 27.03.2019թ. №ԵԿԴ/5041/02/17 վճռով հաստատել է արտադրողների պաշտոնական WEB կայքերի օգտագործման օրինականությունը մրցույթների արդյունքները գնահատելիս:

2. «Փրիթի ուեյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N1.1) իսպառ բացակայում են վերոհիշյալ պաշտոնական պարզաբանումով միանշանակ պահանջվող տեսապատերի համար հատուկ նախատեսված 4 հատ պատի կախիչներն և նրանց մակնիշները:

3. «Փրիթի ուեյ» ՍՊԸ կողմից ներկայացրած առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N1.1) ֆիրմային անվանման սյունակում անգլերեն գրված է «Video-Wall display», ինչը հայերեն նշանակում է ընդամենը «Տեսապատ»:

Ակնհայտ է, որ տվյալ անվանումը սխալ է, չի համապատասխանում իրականությանը, իսկ առաջարկվող Samsung ընկերության արտադրության դիսպլեյների ֆիրմային անվանումն իրականում՝ «Samsung» է:

Հարկ ենք համարում նաև նշել, որ «ԼԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկի (Հավելված №1.1 պատճենը՝ 1 (մեկ) թերթ կցված է սույն բողոքին) առաջին 4 սյունակում զետեղված տեղեկությունները՝ առաջարկված ապրանքի (Mitsubishi մոնիտորներ) ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի և արտադրողի անվանման վերաբերյալ, նույնպես սխալ են և ենթակա են շտկման: Ի դեպ, այս փաստը անհասկանալի պատճառներով ևս դուրս է մնացել գնահատող հանձնաժողովի ուշադրությունից:

Նշենք, որ ՀՀ գնումների մասին գործող օրենսդրությունը՝ ներառյալ ենթաօրենսդրական ակտերը, բացառապես տարբերություն չի դնում տեխնիկական բնութագրերի, ապրանքային նշանի, ծագման երկրի և այլ տվյալների միջև և ոչ մի ձևով չի

դասակարգում այդ տվյալներն ըստ կարևորության կամ նշանակության, այսինքն բոլոր վերը թվարկված տվյալներն օրենսդրի կողմից դիտվում են որպես իրավահավասար:

Եթե վերը թվարկված տվյալների որևիցե դասակարգում տեղի ունենար, ապա այդ փաստը պետք է ամրագրված լիներ ՀՀ գնումների մասին գործող օրենսդրությունում:

Տպավորություն է ստեղծվում, որ գնահատող հանձնաժողովը «Փրիթի ուեյ» ՍՊԸ կողմից ներկայացված Հավելված N1.1-ին պատշաճ ուշադրություն չի հատկացրել և առկա տեղեկություններն ճիշտ չի գնահատել, գալով սխալ եզրահանգման:

Ելնելով վերը նշված փաստերից գտնում ենք, որ Պատվիրատուն ուղղակիորեն և կոպիտ խախտել է 16.12.2016 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի (Հայտերի գնահատումը)՝

- 1-ին մասի դրույթները, այն է՝ «...Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են...»:

- 5-րդ մասի 2-րդ կետի դրույթները, այն է՝ «...հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը...»

- 6-րդ մասը, այն է՝ «...հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները...»:

Բացի այդ, խախտվել են ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի VII բաժնի ՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության դրույթները, այն է՝ «...ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)...»;

- 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթները, այն է՝ «..Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին ...»;

- 67-րդ կետի դրույթները, այն է՝ «... եթե մասնակցի ներկայացրած փվյալների իսկության ստուգման արդյունքում փվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա փվյալ մասնակցի հայտը մերժվում է...»:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առ 08.12.2021թ. N 2 Արձանագրության՝ 1-ին չափաբաժնով «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին կայացրած որոշումը ճանաչել անվավեր (չեղյալ) և «Փրիթի ուեյ» ՍՊԸ հայտը՝ մերժել:

Ընկերությունը 24.12.2021թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ուշադիր ուսումնասիրելով 23.12.2021թ. gbqa_ohanyan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից ստացված Samsung Electronics Rus Company ընկերության աշխատակից Ռ.Կիսելյովի առ 21.12.2021թ. էլեկտրոնային նամակը և նրան կից Samsung VM55T-E դիսփլեյի «Օգտագործողի ձեռնարկ»-ի անգլերեն և ռուսերեն տարբերակները (յուրաքանչյուրը՝ 76 թերթ) «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ՝ բևեռում է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հատուկ ուշադրությունը ստորև թվարկվող հետևյալ փաստերին՝

1) Ռ.Կիսելյովը իր նամակում ուղղակիորեն հաստատում է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի առ 10.12.2021թ. N1/10-12/10 բողոքում ներկայացված այն փաստը, որ «Փրիթի ուեյ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված Samsung VM55T-E դիսփլեյի պարագայում «IPS» հապավման բացվածքն է՝ հենց «In-Plane Switching» (LCD մատրիցաների արտադրման տեխնոլոգիա), այլ ոչ թե «Intelligent Pixel Shift» (մնացորդային պատկերների կանխարգելում), որը համաձայն Պատվիրատուի առ 02.12.2021թ. պաշտոնական պարզաբանմանը հանդիսանում է հրավերի մինիմալ տեխնիկական պահանջ:

2) Համաձայն Ռ.Կիսելյովի նամակում վկայակոչված Samsung VM55T-E դիսփլեյի «Օգտագործողի ձեռնարկ»-ի անգլերեն և ռուսերեն տարբերակների 52-րդ էջի՝ վերոհիշյալ Samsung մոնիտորներն ունեն մնացորդային պատկերների միայն մինիմիզացման (Pixel Shift - Minimise image retention by finely moving pixels horizontally or vertically / Сдвиг пикселов - Эффект остаточного изображения можно свести к минимуму путем точного перемещения пикселов по горизонтали или по вертикали), այլ ոչ թե կանխարգելման ունակություն:

Ընդ որում, «Պիքսելների խելացի տեղաշարժման (Intelligent Pixel Shift - IPS)» տեխնոլոգիան ոչ միայն պաշտպանում է դիսփլեյը մնացորդային պատկերների

առաջացումից, այլ և բարելավում է դիսպլեյի դիտման անկյունը և պատկերի հստակությունը (Intelligent Pixel Shift (IPS) technology not only protects the display from image retention damage but also improves viewing angle and image clarity).

Հետևաբար, Samsung VM55T-E դիսպլեյի վերոհիշյալ «Pixel Shift/ Сдвиг пикселов» բնութագիրը միայն մասամբ և մասնակի է համապատասխանում Պատվիրատուի առ 02.12.2021թ. պաշտոնական պարզաբանումով պահանջված «Intelligent Pixel Shift (IPS)» հատուկ բնութագրին:

Բացի Samsung VM55T-E դիսպլեյի Պատվիրատուի առ 02.12.2021թ. պարզաբանման պահանջներին միայն մասնակի համապատասխանության վերը նշված հարցից, հարկ ենք համարում ևս մեկ անգամ նշել նաև «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի առ 10.12.2021թ. N1/10-12/10 բողոքում արձանագրված այլ փաստերը՝

Ա) «Փրիթի ուեյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N1.1) իսպառ բացակայում են վերոհիշյալ պաշտոնական պարզաբանումով միանշանակ պահանջվող տեսապատերի համար հատուկ նախատեսված 4 հատ պատի կախիչներն և նրանց մակնիշները:

Հարց են հարուցում և հետևյալ հանգամանքները՝ տեսապատերի համար հատուկ նախատեսված 1 (մեկ) հատ պատի կախիչի ձեռքբերման գինը կազմում է միջինը 100 – 120 ԱՄՆ դոլար (առանց 20% ԱԱՀ), իսկ «Փրիթի ուեյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնաառաջարկը էժան է մյուս 2 մասնակիցների գնաառաջարկից (երկուսն էլ ներառում են 4 հատ պատի կախիչների կոնկրետ մակնիշներ) ընդամենը 210 – 217 հազար ՀՀ դրամով (առանց 20% ԱԱՀ) կամ մոտ 430 – 450 ԱՄՆ դոլարով, ինչը համարժեք է 4 հատ պատի կախիչների գնին:

Բ) «Փրիթի ուեյ» ՍՊԸ կողմից ներկայացրած առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N1.1) ֆիրմային անվանման սյունակում անգլերեն գրված է «Video-Wall display», ինչը հայերեն նշանակում է ընդամենը «Տեսապատ»:

Ակնհայտ է, որ տվյալ անվանումը սխալ է, չի համապատասխանում իրականությանը, իսկ առաջարկվող Samsung ընկերության արտադրության դիսպլեյների ֆիրմային անվանումն իրականում՝ «Samsung» է:

Կուզենայինք ևս մեկ անգամ նշել, որ ՀՀ գնումների մասին գործող օրենսդրությունը՝ ներառյալ ենթաօրենսդրական ակտերը, բացառապես տարբերություն չի դնում տեխնիկական բնութագրերի, ապրանքային նշանի, ծագման երկրի և այլ տվյալների միջև և ոչ մի ձևով չի դասակարգում այդ տվյալներն ըստ կարևորության կամ նշանակության,

այսինքն բոլոր վերը թվարկված փվյալներն օրենսդրի կողմից դիտվում են որպես իրավահավասար:

Ելնելով վերոգրյալից ստիպված ենք կրկին եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը «Փրիթի ուեյ» ՍՊԸ կողմից ներկայացված Հավելված N1.1-ին պատշաճ ուշադրություն չի հատկացրել և առկա տեղեկություններն ճիշտ չի գնահատել, գալով սխալ եզրահանգման:

Ուստի կրկին ներկայացնում ենք պահանջ՝ «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առ 08.12.2021թ. N2 Արձանագրության՝ 1-ին չափաբաժնով «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին կայացրած որոշումը ճանաչել անվավեր (չեղյալ) և «Փրիթի ուեյ» ՍՊԸ հայտը՝ մերժել:»:

Ընկերությունը 29.12.2021թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ուշադիր ուսումնասիրելով 27.12.2021թ. gbqa_ohanyan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից ստացված «Հայէրոնավիգացիյա» ՓԲԸ-ի առ 24.12.2021թ. N 8.1-598 նամակը «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ՝ ստիպված է փաստել հետևյալը՝

1) Ինչ վերաբերվում է Պատվիրատուի առ 02.12.2021թ. պաշտոնական պարզաբանումում ներկայացված «IPS» հապավման բացվածքին՝

Ա) «HDMI» հապավումն հանդիսանում է Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովի (IEC - International Electrotechnical Commission) կողմից գրեթե 20 տարի առաջ ընդունված և պարբերաբար թարմացվող միջազգային ստանդարտ, ինչը բացառում է տվյալ հապավման որևիցե երկակի մեկնաբանություն և, բնականաբար, չի պահանջում վերծանում:

Իր հերթին «IPS» հապավումն ոչ մի կերպ ստանդարտիզացված և դասակարգված չէ ու յուրաքանչյուր արտադրող իրավասու է այս հապավման բացվածքն շարադրել իր ցանկացած ձևով:

Այս հանգամանքի վառ ապացույց է հանդիսանում թե Պատվիրատուի առ 02.12.2021թ. պաշտոնական պարզաբանումում սեվով սպիտակի վրա արձանագրված փաստն, որ «IPS» հապավման բացվածքն է՝ «Intelligent Pixel Shift» (տվյալ բացվածքն օգտագործում է ճապոնական Mitsubishi Electric Corp. ընկերությունը), թե «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի առ 10.12.2021թ. N1/10-12/10 բողոքում ներկայացրած Samsung ընկերության պաշտոնական WEB կայքից արտատպումը առ այն, որ «IPS» հապավումը նշանակում է «In-

Plane Switching», ինչն իր հերթին հաստատել է նաև Samsung Electronics Rus Company ընկերության աշխատակից Ռ.Կիսելյովը իր առ 21.12.2021թ. էլեկտրոնային նամակում:

Ցավալի է, որ՝ օրինակ, ոչ թե բանասիրական, այլ տեխնիկական ասպարեզում գործող կազմակերպության անձնակազմին այս պարզ տեղեկությունները հայտնի չեն:

Բ) Միաժամանակ զարմանք և «հիացմունք» է առաջացնում Պատվիրատուի փորձն «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի անունից անհիմն ենթադրություններ անելն և «սպիտակը սև» ներկայացնելն, օգտագործելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ուղղակի պարզաբանման հարցումն և Պատվիրատուի կողմից նույն ձևով տրված ուղղակի պարզաբանման պատասխանը: Այսպիսի փորձերն անընդունելի են և լիովին առ ոչինչ իրավական տեսակետից:

2) Ինչ վերաբերվում է «Փրիթի ուեյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N1.1) Պատվիրատուի առ 02.12.2021թ. պաշտոնական պարզաբանումով միանշանակ պահանջվող տեսապատերի համար հատուկ նախատեսված 4 հատ պատի կախիչների և նրանց մակնիշների իսպառ բացակայության հարցին, ապա «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ավելի քան մանրամասն ներկայացրել է իր կարծիքը տվյալ խնդրի վերաբերյալ թե առ 10.12.2021թ. N1/10-12/10 բողոքում, թե ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին արդեն իսկ ներկայացրած առ 24.12.2021թ. N1/10-12/24 դիրքորոշումում և այլևս հարկ չի գտնում վերադառնալ տվյալ հարցի քննարկմանը:

3) Պատվիրատուն իր առ 24.12.2021թ. N 8.1-598 գրությունում զարմանալիորեն զգուշանում է անդրադառնալ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի առ 10.12.2021թ. N1/10-12/10 բողոքում արձանագրված նաև այն փաստին, որ «Փրիթի ուեյ» ՍՊԸ կողմից ներկայացրած առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N1.1) ֆիրմային անվանման սյունակում անգլերեն գրված է «Video-Wall display», ինչը հայերեն նշանակում է ընդամենը «Տեսապատ»:

Մի գուցե Պատվիրատուի ցանկությունը զերծ մնալ հիշյալ հարցի քննարկումից բացատրվում է հենց այն հանգամանքով, որ նա վերջապես ընդունել է այն ակնհայտ փաստն, որ «Video-Wall display» ֆիրմային անվանումը սխալ է, չի համապատասխանում իրականությանը, իսկ Samsung ընկերության արտադրության դիսպլեյների ֆիրմային անվանումն իրականում՝ «Samsung» է:

Եվս մեկ անգամ նշենք, որ ՀՀ գնումների մասին գործող օրենսդրությունը՝ ներառյալ ենթաօրենսդրական ակտերը, բացառապես տարբերություն չի դնում տեխնիկական բնութագրերի, ապրանքային նշանի, ծագման երկրի և այլ տվյալների միջև և ոչ մի ձևով չի

դասակարգում այդ փվյալներն ըստ կարևորության կամ նշանակության, այսինքն բոլոր վերը թվարկված փվյալներն օրենսդրի կողմից դիտվում են որպես իրավահավասար:

Ուստի ելնելով վերը գրվածներից սփիպված ենք արդեն իսկ երրորդ անգամ եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը «Փրիթի ուեյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված N1.1-ին պատշաճ ուշադրություն չի հատկացրել, առկա տեղեկություններն ճիշտ չի գնահատել, հրավերի պահանջների նկատմամբ առկա ակնհայտ անհամապատասխանություններն անհասկանալիորեն չի հայտնաբերել և եկել է սխալ եզրահանգման:

Մինչդեռ եթե գնահատող հանձնաժողովն կատարեր «Փրիթի ուեյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված N1.1-ի պատշաճ ուսումնասիրություն, ապա վերջինս՝

- հայտերի բացման նիստից ընդամենը 3 ժամ անց՝ մասնակիցներին չէր ուղարկի «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնման ընթացակարգի առ 08.12.2021թ. N2 Արձանագրությունն և «Փրիթի ուեյ» ՍՊԸ-ի հետ Պայմանագիր կնքելու մասին գնահատող հանձնաժողովի առ 08.12.2021թ. որոշումը.

- անկասկած կկիրառեր ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 41-րդ կետի դրույթներն, այն է՝ «...Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ... ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը...»:

Ուստի հերթական անգամ ներկայացնում ենք պահանջ՝ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առ 08.12.2021թ. N2 Արձանագրության՝ 1-ին չափաբաժնով «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին կայացրած որոշումը ճանաչել անվավեր (չեղյալ) և «Փրիթի ուեյ» ՍՊԸ հայտը՝ մերժել:»:

3. <u>«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 16.12.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/20793-2021 գրությամբ դիմել է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 15.12.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 24.12.2021թ.-ին թիվ 8.1-598 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն 15.12.2021թ.-ին բողոք է ներկայացրել (Բողոքի ծածկագիր ԳԲՔԱ-ԼՕ-2021/114) Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ պաշտոնապես ներկայացնելով պահանջ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առ 08.12.2021թ. N2 արձանագրության 1-ին չափաբաժնով «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն ու վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին կայացրած որոշումն անվավեր ճանաչելու (չեղյալ) և «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին:

Գտնում ենք, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 15.12.2021թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանություններով.

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն բողոք ներկայացնելիս հիմք է ընդունել Պատվիրատուի կողմից ARMEPS համակարգում 02.12.2021թ.-ին հրապարակված պարզաբանումը: Այս կապակցությամբ հայտնում ենք, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի N1 հարցադրումը եղել է ոչ թե «IPS» տեսակի Մոնիտորի հապավման բացվածքի վերաբերյալ, այլ ուղղակի «^S»-ի: Հաշվի առնելով, որ ապրանքի տեխնիկական բնութագրում հստակ նշված է, որ մոնիտորի տեսակը պետք է լինի «IPS», ինչի բացվածքը համապատասխան ոլորտի մասնագետներին հասկանալի է, որ «IPS» տեսակի մոնիտոր նշանակում է «In-Plane Switching» տեսակի մոնիտոր, ուստի գնահատող հանձնաժողովը գտել է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հարցադրման նպատակը մոնիտորի լրացուցիչ ֆունկցիա (Inteligent Pixel Shift) առաջարկելն է: Այդ իսկ պատճառով պարզաբանման 1-ին հարցադրմանը պատասխանվել է, որ «IPS» հապավումի բացվածքն է՝ «Inteligent Pixel Shift»: Միաժամանակ Ձեր ուշադրությանն ենք ցանկանում հրավիրել 2-րդ հարցադրմանը. «Արդյո՞ք HDMI մուտքային ինտերֆեյսի բնութագրում տեղ չի՞ գտել տպագրական վրիպակ և այն նշված

«HDMI2 2.0» փոխարեն չպետք է կարդացվի պարզապես «HDMI 2.0». Նույն տրամաբանությամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն կարող էր 1-ին հարցադրումը ձևակերպել հետևյալ կերպ. «IPS» հապավման բացվածքը մոնիտորի տեսակ է՞ (In-Plane Switching), թե՞ մոնիտորի ֆունկցիա (Inteligent Pixel Shift): Քանի որ ինչպես «IPS», այնպես էլ «HDM/» հապավումները ապրանքի տեխնիկական բնութագրում ընդամենը մեկ տեղ են նշված, այստեղից կարելի է հետևություն անել, որ 1-ին հարցադրման ժամանակ դիտավորյալ չի նշվել, թե ինչ է նշանակում <</ՔS»-ք՝ մոնիտորի տեսակ, թե մոնիտորի ֆունկցիա:

Իսկ ինչ վերաբերում է 3-րդ հարցադրմանը, ապա հայտնում ենք, որ կողմին տրվել է հստակ պարզաբանում, որ Տեսամոնիտորների տեղադրման և կարգաբեկման համար անհրաժեշտ բոլոր պարագաները՝ այդ թվում՝ տեսապատերի համար հատուկ նախատեսված կարգաբերվող պատի կախիչները պետք է մատակարարվեն Մատակարարի կողմից, այսինքն նշված կախիչների գումարը ներառված է լինելու պայմանագրի գնի մեջ:

Հարկ ենք համարում նաև նշել, որ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի «SAMSUNG» ընկերությանը ուղղված համապատասխան հարցմանը, «SAMSUNG» ընկերության կողմից պատասխանվել է, որ «IPS» (In-Plane Switching) տեսակի մոնիտորը իր մեջ ներառում է «Inteligent Pixel Shift» լրացուցիչ ֆունկցիան:

Ելնելով վերը նշվածներից խնդրում ենք 15.12.2021թ.-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը (Բողոքի ծածկագիր ԳԲՔԱ-ԼՕ-2021/114) մերժել:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն, 22.12.2021թ.-ին ներկայացված միջնորդությամբ ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը, լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ բանավոր անդրադարձ կատարելով բողոքով ներկայացված հիմքերին ու հիմնավորումներին:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/114 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից տեսամոնիտորների ձեռքբերման նպատակով 01.12.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի (այսուհետ նաև՝ Հավելված 1) համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում 1 հատ քանակով «Տեսամոնիտորներ 110” Տեսա-Պատ (Video-Wall)՝ բաղկացած չորս LCD մոնիտորներից» ապրանքատեսակը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 323211501 /1:

iii. Հավելված 1-ով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրի համաձայն՝

110” Տեսա-Պատ (Video-Wall)՝ բաղկացած չորս LCD մոնիտորներից, Mitsubishi կամ Samsung կամ համարժեքը.

- տեսա-պատի ընդհանուր պատկերի մակերեսը ոչ պակաս, քան՝ 241,8x136 սմ.
- յուրաքանչյուր մոնիտորի պատկերի մակերեսը ոչ պակաս, քան՝ 120,9x68 14 սմ.
- տեսա-պատի անկյունագիծ ոչ պակաս, քան՝ 110 դյույմ.
- շփման եզրը շրջանակից շրջանակ, ոչ ավելին, քան՝ 1.8.
- յուրաքանչյուր մոնիտորի անկյունագիծ՝ 55 դյույմ.
- յուրաքանչյուր մոնիտորի կետայնությունը՝ 1920x1080 պիքսել.
- մոնիտոր տեսակը՝ IPS.
- տեսա-պատի ընդհանուր կետայնությունը՝ 4K/UHD 3840x2160 պիքսել.
- պայծառությունը առավելագույնը՝ 500 cd/m².
- մուտքերը՝ DVI-D, DP 1.2, HDMI 2 2.0.
- աշխատանքային ռեժիմը՝ 24/7.
- տեսա-պատի ընդհանուր էներգիայի սպառումը ոչ ավելին, քան՝ 600 Վտ.
- տեսա-պատի ընդհանուր քաշը, ոչ ավելին, քան՝ 130 կգ.
- սնուցումը կատարվում է փոփոխական լարման ցանցից՝ 220Վ, 50 Հց.

Մատակարարված ապրանքը պետք է տեղադրվի և կարգաբեկվի Մատակարարի կողմից:

iv. Հրավերի պարզաբանման մասին արված հայտարարությամբ՝ տրված հարցին ի պատասխան, թե ի՞նչ է նշանակում «IPS» հապավումը և տրամադրել նրա բացվածքը, պարզաբանվել է, որ «IPS» հապավումի բացվածքն է՝ Intelligent Pixel Shift:

v. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, «Լանս» ՍՊԸ-ն և «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն:

vi. «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ընթացակարգի թիվ 1.1 հավելվածի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի համաձայն՝

Չափաբաժնի համար	**Առաջարկվող ապրանքի**				
	Ֆիրմային անվանումը	**ապրանքային նշանը**	**մակնիշը**	**արտադրողի անվանումը**	**տեխնիկական բնութագրերը**
1	Video-Wall display	*Samsung*	*VM55T-E*	*Samsung Electronics*	110” Տեսա-Պատ (VideoWall)՝ բաղկացած չորս LCD մոնիտորներից - տեսա-պատի ընդհանուր պատկերի մակերեսը՝ 241,8x136 սմ. - յուրաքանչյուր մոնիտորի պատկերի մակերեսը՝ 120,9x68 14 սմ. - տեսա-պատի անկյունագիծ՝ 110 դույմ. - շփման եզրը շրջանակից շրջանակ՝ 1.8. - յուրաքանչյուր մոնիտորի անկյունագիծ՝ 55 դույմ. - յուրաքանչյուր մոնիտորի կետայնությունը՝ 1920x1080 պիքսել. - մոնիտոր տեսակը՝ IPS. - տեսա-պատի ընդհանուր կետայնությունը՝ 4K/UHD 3840x2160 պիքսել. - պայծառությունը՝ 500 cd/m^2. - մուտքերը՝ DVI-D, DP 1.2, HDMI 2 2.0. - աշխատանքային ռեժիմը՝ 24/7. - տեսա-պատի ընդհանուր էներգիայի սպառումը՝ 600 Վտ. - տեսա-պատի ընդհանուր քաշը՝ 130 կգ. - սնուցումը կատարվում է փոփոխական լարման ցանցից՝ 220Վ 50 Հց. **Տեղադրումը և կարգաբերումը կիրականացվի Մատակարարի կողմից:**

vii. «Լանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ընթացակարգի թիվ 1.1 հավելվածի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի համաձայն՝

հ/հ	**Առաջարկվող ապրանքի**				
	Ֆիրմային անվանումը	**ապրանքային նշանը**	**մակնիշը**	**արտադրողի անվանումը**	**տեխնիկական բնութագրերը**

1	Տեսամոնիտորներ 110” Տեսա-Պատ (Video-Wall)՝ բաղկացած չորս LCD մոնիտորներից	55” Mitsubishi 4Diamond Grid DG55ENB503	Mitsubishi	Mitsubishi Group	110” Տեսապատ 4K/UHD (3,840 x 2,160 pixels) իսկական կետայնությամբ բաղկացած՝ 4 (չորս) հատ 55” Mitsubishi 4Diamond Grid DG55ENB503 հեղուկ-բյուրեղային (LCD) մոնիտորներից և 4 (չորս) հատ DGVW-BRK պատի կախիչներից: - տեսա-պատի ընդհանուր պատկերի մակերեսը 241,8x136 սմ. - Յուրաքանչյուր 55” Mitsubishi 4Diamond Grid DG55ENB503 մոնիտոր պատկերի մակերեսը ոչ պակաս, քան 120,9x68 14 սմ. - տեսա-պատի անկյունագիծ 110 դյույմ. - շփման եզրը շրջանակից շրջանակ 1.8 - յուրաքանչյուր մոնիտորի անկյունագիծ 55 դյում. - յուրաքանչյուր մոնիտորի կետայնությունը 1920x1080 պիքսել. - մոնիտոր տեսակը IPS. - տեսա-պատի ընդհանուր կետայնությունը 4K/UHD 3840x2160 պիքսել. - պայծառությունը 500 cd/m^2. - մուտքերը՝ DVI-D, DP 1.2a, HDMI 2.0. - աշխատանքային ռեժիմը 24/7. - տեսա-պատի ընդհանուր էներգիայի սպառումը ոչ ավելին, քան 600 Վտ. - տեսա-պատի ընդհանուր քաշը, ոչ ավելին, քան՝ 130 կգ. - սնուցումը կատարվում է փոփոխական լարման ցանցից 220Վ, 50 Հց. Մատակարարված ապրանքը կտեղադրվի և կարգաբեկվի Մատակարարի կողմից: Երաշխիքային սպասարկման ժամկետը: 1 տարի

viii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 08.12.2021թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի: Էլեկտրոնային հայտերում հրավերով նախատեսված փաստաթղթերն առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

ix. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից և ընտրված մասնակցին օրենքով սահմանված կարգով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

x. www.gnumner.am կայքում 13.12.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ 5 օրացուցային օր:

6. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 15.12.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ

հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը,

հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից տեսամոնիտորների ձեռքբերման նպատակով 01.12.2021թ.-ին հայտարարված «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի համաձայն գնման առարկա է հանդիսանում 1 հատ քանակով Տեսամոնիտորներ 110” Տեսա-Պատ (Video-Wall)՝ բաղկացած չորս LCD մոնիտորներից, իսկ սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրով, բացի այլ պայմաններից, մոնիտորի տեսակը սահմանվել է՝ IPS: Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, «Լանս» ՍՊԸ-ն և «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն:

«Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ընթացակարգի թիվ 1.1 հավելվածում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, որպես առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանում նշվել է «Video-Wall display», իսկ «Լանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ընթացակարգի թիվ 1.1 հավելվածում, որպես առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանում նշվել է՝ «Տեսամոնիտորներ 110” Տեսա-Պատ (Video-Wall)՝ բաղկացած չորս LCD մոնիտորներից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.12.2021թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի: Էլեկտրոնային հայտերում հրավերով նախատեսված փաստաթղթերն առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից և ընտրված մասնակցին օրենքով սահմանված կարգով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

www.gnumner.am կայքում 13.12.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ 5 օրացուցային օր:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Ընկերության կողմից ներկայացված բողոքի, Երրորդ անձի և Պատվիրատուի կողմից ներկայացված առարկությունների իրավական ու փաստական հանգամանքներին, ինչպես նաև ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը՝ Բողոքներ քննող անձը գալիս է եզրակացության, որ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով ընթացակարգին հայտեր ներկայացրած «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի և «Լանս» ՍՊԸ-ի կողմից թիվ 1.1 հավելվածով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքի տեխնիկական պահանջներին, որպիսի պայմաններում Հանձնաժողովը, «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի և «Լանս» ՍՊԸ-ի հայտերը 08.12.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող և նույն արձանագրությամբ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում կայացնելով, գործել է ոչ իրավաչափ, այն է՝ Մասնակցի կողմից ներկայացված թիվ 1.1 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագրում չի արձանագրել անհամապատասխանություն-

ներ (ֆիրմային անվանումները սխալ են նշվել) և չի ծանուցել վերջինիս, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը ներկայացնել հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի և «Լանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված և գնման ընթացակարգի հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով պետք է ծանուցեր մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը՝ կիրառելով Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերով սահմանված պահանջները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, կայացնելով «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի և «Լանս» ՍՊԸ-ի հայտերը հրավերով նախատեսված պայմաններին բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում, թույլ է տվել Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի խախտումներ, որպիսի պայմաններում բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն:

Անդրադառնալով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից տրված պարզաբանմանը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 29-րդ հոդվածի իմաստով տրված պարզաբանումը հանդիսանում է հրավերի անբաժանելի մասը: Ըստ այդմ, պատվիրատուի կողմից տրված ցանկացած պարզաբանում հանդիսանում է պարտադիր կատարման ենթակա հրավերի յուրովի պահանջ: Այդ հրամայականով է

պայմանավորված հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարության տեղեկագրում հրապարակելու պատվիրատու՝ Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պարտավորությունը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Պատվիրատուն, պարզաբանելով, թե ի՞նչ է նշանակում «IPS» հապավումը, հայտնել է, որ «IPS» հապավումի բացվածքն է՝ Intelligent Pixel Shift:

Ամփոփելով վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ տվյալ դեպքում Պատվիրատուն պետք է մասնակիցներից պահանջի և վերջիններիս հայտերը գնահատի ելնելով նաև իր կողմից տրված պարզաբանման բովանդակությունից, որն, ինչպես վերը նշվեց, ունի համապարտադիր բնույթ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 15.12.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/114 ծածկագրով բողոքը բավարարել մասնակիորեն:
2. Պարտավորեցնել թիվ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել 08.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

3. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**